ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Էջմիածին քաղաքի մտավորականության հետ՝ Արմավիրի մարզպետ Ալբերտ Հերոյանի և Էջմիածնի քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանի գլխավորությամբ:

Հանդիպման նպատակն էր՝ քննարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ փոխհամագործակցության այն ոլորտները, որոնք նպաստավոր կարող են լինել քաղաքի զարգացմանն ու բարգավաճմանը:

Այս առիթով Նորին Սրբությունը ներկաներին տեղեկացրեց մի շարք ծրագրերի մասին, որոնք առաջիկայում կյանքի կկոչվեն: Դրանցից է քաղաքի նախկին պիոներ պալատում հայորդյաց տուն հիմնելու ծրագիրը: Հայոց Հայրապետը գնահատանքով նշեց, որ ամերիկաբնակ բարերարներ տեր և տիկին Հարություն Թուֆայանները ոչ միայն ստանձնել են շենքի վերանորոգման և կահավորման, այլև հետագա գործունեության ծախսերը: Վեհափառ Հայրապետի հաղորդմամբ, առաջիկայում քաղաքի երեխաները Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կստանան նաև մեկ այլ նվեր՝ ընդարձակ մի խաղահրապարակ: Նախատեսվում է նաև քաղաքում ծերանոց կառուցել: Վեհափառ Հայրապետը հավաստեց, որ Մայր Աթոռը հնարավորինս կիրականացնի նաև այլ ծրագրեր:

Հանդիպման ընթացքում ներկաները առիթ ունեցան իրենց հարցերն ուղղելու Հայոց Հայրապետին և իրենց մտածումները կիսելու կրթական և սոցիալական զանազան խնդիրների շուրջ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՅՈՒՐԻ ԼՈՒԺԿՈՎԻՆ

Հունվարի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի գլխավորած պատվիրակությանը՝ Երևանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանի և Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը և Մոսկվայի քաղաքապետն ուրախությամբ փաստեցին, որ վերջին տասը տարիներին առավել է ամրապնդվել հայ-ռուսական դարավոր բարեկամությունը:

Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Մոսկվայի քաղաքապետին՝ հայ համայնքի նկատմամբ ունեցած հոգատար վերաբերմունքի համար:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ պրն Լուժկովը դրվատանքով խոսեց մոսկվաբնակ հայերի մասին: Նա նշեց, որ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի

աջակցությամբ քաղաքապետարանը բարի հարաբերություններ է հաստատում բոլոր համայնքների և կրոնական հարանվանությունների հետ:

Հանդիպման ավարտին Հայոց Հայրապետը պրն Լուժկովին շնորհեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի շքանշան:

Հանդիպմանը ներկա էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանը և Ս. Էջմիածնի միաբանության հոգևոր հայրեր: